«ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ

"YEREVANI AVTOBUS" CJSC

ՀՀ, ք. Երևան, Թևոսյան 5, 0076
5 Tevosyan, 0076, Yerevan, RA

Հեռ./Tel.: (374 10)
էլ.փոստ/E-mail: yerevani.avtobus@gmail.com

№ ԵԱ812-Կ

«21» օգոստոսի 2013թ.

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆ
ՊԱՐՈՆ՝ Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հայրապետյան

Ի լրումն մեր 01.08.2013թ N755ել գրության, հայտնում եմ,որ «Երևանի ավտոբուս» ՓԲ Ընկերության կողմից Երևան քաղաքում սպասարկվում են թվով 18 ավտոբուսային երթուղիներ:Այս պահին ձեռնարկությունում աշխատող վարորդների թիվը 199 (հարյուր ինսունինն է) և ևս երեք վարորդ գտնվում են փորձաշրջանի մեջ:

Վարորդների աշխատանքի վարձատրությունը հաշվարկվում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի հիման վրա ժամավճարային եղանակով, համապատասխան ժամային տարիֆային դրույքաչափով,որը ս/թ հուլիսի 1-ից «Նվազագույն աշխատավարձի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների արդյունքում 1 ժամը կազմում է 357.1 ՀՀ դրամ՝,նախկինում գործող 279 ՀՀ դրամի փոխարեն:Համաձայն ՀՀ աշխատանքային օրենսդրության,վարորդը նաև լրացուցիչ վարձատրվում է արտաժամյա աշխատելու,ինչպես նաև գիշերային և տոն օրերին կատարած աշխատանքի համար՝,համապատասխանաբար որպես հավելում ստանալով տոկոսային տարիֆային դրույքաչափեր (տես՝ՀՀ աշխատանքային օրենսգրքի 178-ից 199-ը հոդվածները):

Անհրաժեշտ է նշել նաև,որ ՀՀ կառավարության 16.08.2001թ. N762 որոշման 59-րդ կետի համաձայն՝ մեկից ավելի ներքաղաքային և միանման ավտոբուսային երթուղիներ սպասարկող կազմակերպություններին,անհրաժեշտության դեպքում թույլատրվում է տվյալ երթուղում շահագործել նաև իր կողմից սպասարկվող նմանատիպ ներքաղաքային և միանման երթուղիների մրցույթներում հաղթող ճանաչված այլ ավտոբուսներ՝,

կազմակերպությունում հրամանագրված,այլ՝ սահմանված պահանջները բավարարող վարորդների միջոցով:

Միաժամանակ հայտնում եմ.որ Ձեր գրության 3-րդ կետի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը մերժվում է,քանի որ,այն հակասում է Տեղեկատվության մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի, ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 133,134 հոդվածների և Անհատական տվյալների մասի ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի պահանջներին:

Հարգանքով՝

Տնօրեն Է.Թարփոշյան